ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՀՀՎԱ-22/003

ՀՀ պաշտոնաթող նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանի գրասենյակի գործունեության ֆինանսավորումն ապահովելու մասին

ք. Երևան «20» հունվարի 2022թ.

«Վարչապետի աշխատակազմ» պետական մարմինը (այսուհետ՝ Աշխատակազմ), ի դեմս գործերի կառավարիչ Գարիկ Բոշյանի, մի կողմից և ՀՀ պաշտոնաթող նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանի գրասենյակը (այսուհետ՝ Գրասենյակ), ի դեմս տնօրեն Ավետիս Ավագյանի, մյուս կողմից, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2018 թվականի օգոստոսի 2-ի «Պաշտոնաթող հանրապետության նախագահի գրասենյակի գործունեության ֆինանսավորման կարգը հաստատելու մասին» N 856-Ն որոշումը, ինչպես նաև հիմնվելով Երևանի քաղաքապետի 2014 թվականի հունվարի 10-ի «Ծիծեռնակաբերդի խճուղի հ.10 հասցեում գտնվող, սեփականության իրավունքով Լևոն Տեր-Պետրոսյանին պատկանող բնակելի տան կիսանկուղային և 1-ին հարկերի տարածքների գործառական նշանակությունը հասարակական սահմանելու մասին» թիվ 13-Ա որոշման վրա կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. Պայմանագրի առարկան

1.1 Սույն պայմանագրով Աշխատակազմը պարտավորվում է վճարել Երևան քաղաքի, Ծիծեռնակաբերդի խճուղի 10 հասցեում գտնվող տան կոմունալ ծախսերի (գազ, ջուր, էլեկտրաէներգիա) յոթանասունհինգ տոկոսը՝ համաձայն Գրասենյակի կողմից ներկայացվող մատակարարներից ստացված հաշիվ-ապրանքագրերի:

2. Կողմերի իրավունքները և պարտականությունները

2.1 Գրասենյակը պարտավորվում է ամեն ամսվա տասնհինգերորդ օրը Աշխատակազմ ներկայացնել նախորդ ամսվա կոմունալ ծախսերի՝ մատակարարներից ստացված հաշիվ-ապրանքագրերը:

2.2 Աշխատակազմը պարտավորվում է ապահովել սույն պայմանագրի 1.1 կետում նախատեսված ծախսերի վճարումը, ընդ որում, վճարումն իրականացնելու է անկանխիկ ձևով՝ համապատասխան փաստաթղթերի առկայության հիման վրա:

3. Այլ պայմաններ

3.1 Պայմանագրի պայմանները կիրառվում են մինչև պայմանագիրն ուժի մեջ մտնելը կողմերի միջև փաստացի ծագած հարաբերությունների նկատմամբ: Ընդ որում մինչև պայմանագիր կնքելը կատարողի կողմից մատուցված ծառայության դիմաց վճարումն իրականացվում է այդ պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու դեպքում:

3.2 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա Պայմանագրի անբաժանելի մասը:

3.3 Սույն պայմանագիրը տարածվում է 01.01.2022թ. կողմերի միջև ծագած հարաբերությունների նկատմամբ և գործում է մինչև 31.12.2022թ. ներառյալ:

3.4 Պայմանագիրը կազմված է 2 էջից, հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկական օրինակ;

4. Կողմերի հասցեները, վավերապայմանները և ստորագրությունները

Աշխատակազմ	Գրասենյակ
«Վարչապետի աշխատակազմ»	ՀՀ պաշտոնաթող նախագահ Լևոն
Պետական մարմին	Տեր-Պետրոսյանի գրասենյակ
Հասցե՝ ք. Երևան, Հանրապետության	Հասցե՝ ք. Երևան, Ծիծեռնակաբերդի
Հրապարակ, Կառավարական տուն 1	խճուղի 10
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	ՀՎՀՀ 01528583:
Հ/Հ 900011022085	
ՀՎՀՀ 02505554	
Կ.Տ.	Կ.Տ.